

374

h-61

1936

Պրովետարներ բոլոր յերթերի վարդապետ
MAR 2010

ՀՍԽՀ ԼՈՒՍԺՈՂԱԿՈՄԱՏԻ ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ



==ԻՆՉԻՑ

ՍԿՍԵԼ ==

374
h-61

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԼՈՒՍԿԱՐԻՆԵՏԻ

ՅԵՐԵՎԱՆ

1986 թ.

ԱՌԱՋԱԲԱՆ

Համ. Կ(բ)Կ Կենտկոմի, խՍՀՄ Ժողկոմխորհի ս/թ. հունվարի 16-ի և ՀՍՍՀ-ի Կենտգործկոմի ժարտի 14-ի վերջին անգրագրությունների և կիսագրագրությունների վերացման աշխատանքները ստանում են առանձին բովանդակություն:


Այդ վերջին մեջ հիմնականը կայանում են նրանում, վոր 1936 և 1937 թվերի ընթացքում պետք է վերացվի մեծահասակների անգրագրությունն ու կիսագրագրությունը:

Վերջինի կարելի լինի ազատվել անցյալի այդ տխուր ժառանգությունից և այդպիսով կենսագործել կուսակցության և կառավարության վերջումներն, անհրաժեշտ է ստեղծել այդ աշխատանքի շուրջը խորհրդային լայն հասարակայնություն ու ազատվել: Միայն այս ժամանակ է խոսում ընդ. Կրուպսկայան իր «Ինչից սկսել» հոդվածում և պիտեաներին ուղղած իր նամակում:

Ընդ. Կրուպսկայան իր այդ յերկու դոկումենտներում կանգ է առնում անգրագրություն և կիսագրագրության վերացման գծով խորհուրդներին հից կազմակերպվելիք սեկցիաների անելիքների վրա, կոչվանելով պիտեաներին լայն ոժանդակություն ցույց տալ կոմսոմոլին:

Լուսժողկոմտտի մեծահասակների ուսուցման վար-

Գառ. Կենտկոմի — Սե. Թերզյան
Կազմեց — Ս. Մայրիկյան
Ստեղծեց — Ս. Հովսեփյան



2005
38

Դուրգերատի ազգային, Յերևան, Նալբանդյան № 11

Դավիթ Ն 165 Գառվեց № 254 Յիր. 2000

չությունը նպատակ ունենալով մասսայականացնելու
ընկ. Կրուպսկայայի վերը հիշված հոգիածները լույս և
ընծայում ներկա բրոշյուրը, կցելով նրան սեկցիաների
անելիքների առթիվ տեղերն ուղարկված հրահանգը,
ինչպես նաև աշխատանքի որիննաիր պլանը, վորով
պետք է հիմնականում առաջնորդվեն սեկցիաները:

Ն. Կ. ԿՐՈՒՊՍԿԱՅԱ

Ի Ն Չ Ի Յ Ս Կ Ս Ե Լ

Փետրվարի 27-ին հրապարակվեց ԽՍՀՄ Ժողկոմ-
խորհի և Համ. Կ(բ)Կ. Կենտկոմի վերոշումը՝ անգրագետ-
ների և կիսագրագետների ուսուցման ասպարիզում
կատարվելիք աշխատանքի մասին:

Անգրագետների և կիսագրագետների ուսուցումն
այնպիսի մի խնդիր է, վորը չի կարելի կենսագործել
առանց իրենց իսկ մասնանների ամենակտիվ, ամենա-
հոգատար վերաբերմունքի՝ դեպի այդ գործը:

Ի՞նչից սկսել: Հրապարակված վորոշման մեջ կա
այսպիսի մի կետ. «Քաղաքային ու գյուղական խոր-
հուղներին կից, ինչպես նախկին քաղաքային կից
ստեղծվում են անգրագիտության ու կիսագրագիտության
վերացման սեկցիաներ»: Անհրաժեշտ գործ է Բաղխոր-
հուղները, գյուղխորհուրդներն ու շրջագործկոմները մոտ
են կանգնած բնակչությանը, նրանց ամենից լավ և
հայտնի, թե շատ անգրագետներ ու կիսագրագետներ
կան արդյոք այն գյուղերում, այն քաղաքային թա-
ղամասերում, վորտեղ իրենք աշխատում են, վորը նրանք
ինչպես ասում են՝ «անգիր» գիտեն, ի՞նչ մարդիկ են
դրանք, ի՞նչպես և ինչով պետք է ոգնել նրանց, ո՞վ
կարող է ամենից ավելի լավ ոգնել: Անհրաժեշտ է,
վոր անմիջապես ստեղծվեն անգրագիտության ու կիսա-

գրադիրտության վերացման սեկցիաներ, Չի կարելի
այդ գործը հետաձգել զարնանացանի կամ զանիայի
պատրվակով: Բնակչութիւնն ինքը պետք է հետեւի,
վոր Համ. Կ(բ) Կենտկոմի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի
վորոշումը կատարվի և կատարվի վոչ թե խոսքով, այլ
գործով:

Անգրագիրտության և կիսագրագիրտության վե-
րացման սեկցիաների շուրջը պետք է անմիջապես
ակտիվ համալսմբել: Մարդիկ չպետք է սպասեն, մինչև
վոր կազմակերպված սեկցիան ծանուցագիր ուղարկի
իրենց, այլ իրենք պետք է գնան այնտեղ, ձգտեն,
վորպեսզի իրենց մտցնեն ակտիվի կազմի մեջ: Դյուզ-
կոտպների նախագահներն որինակ, միթե պետք է
սպասեն, մինչև որ ծանուցագիր ուղարկեն իրենց,
միթե նրանք չպետք է մտնեն սեկցիայի մեջ, վորպեսզի
իմանան, թե քանի տետր, մատիտ, գրչածայր, վորջան
թանաք պետք է ձեռք բերել նրանց համար, ովքեր
ընդհուպ ձեռնամուխ են լինում գրագիրտութիւնն սո-
վորելուն: Դրադարանապետուհին, որինակ, միթե
չպետք է անմիջապես զրույց ունենա անգրագետների
ու կիսագրագետների հետ այն մասին, թե ինչպես և
վորտեղ է ավելի հարմար անցկացնել ընթերցանու-
թիւնը, ինչ հարցեր են նրանց ամենից ավելի հետա-
քըքըրում այժմ: Այդ բանը նա ամենից ավելի լավ
կարող է կատարել խորհուրդներն սեկցիայի միջոցով:

«Կորչի անգրագիրտութիւնը» ընկերութիւնն նախ-
կին անդամները, վորոնք նրա ակտիվիստներն են
յեզել, միթե անմիջապես չպետք է մտնեն գյուղխոր-
հրդի կամ սեկցիայի ակտիվի կազմի մեջ, անհապաղ
վորոշեն, թե ինչ աշխատանք են կատարելու իրենք:

Այն կոմյերիտականները, վորոնք պարտավորութիւն
են ստանձնել աշխատելու գորակոչիկներին և 14-ից մինչև
18 տարեկան դեռահասների մեջ, վորոնք մի շարք
պատճառների հետևանքով դուրս են մնացել դպրոցի
պատերից միթե նրանք պետք է գործեն սեկցիայից
անկախ, վորքի վրա և վոչ թե հանդիսանան սեկցիայի
առաջավոր ակտիվիստները: Միթե ուսուցիչները կա-
քող են հեռու մնալ անգրագիրտության վերացման գոր-
ծից, նրանք, վոր ամենից ավելի լավ են զինված դա-
սավանդման փորձով: Միթե նրանք անմիջապես չպետք
է զբաղվեն անգրագիրտության ու կիսագրագիրտության
վերացման կադրերի ընտրութեամբ, նրանց հրահան-
գումը կազմակերպելով, անփորձ ուսուցիչներին մե-
թոդական ոգնութիւնն ցույց տալով: Միթե սեկցիա-
ներն անմիջապես չպետք է մշակեն ամառային աշ-
խատանքի պլանը: Միթե չպետք է անմիջապես կազ-
մակերպել խորհրդի սպասարկած չրջանում գտնվող
կիսագրագետների ու անգրագետների ստույգ հաշվա-
ռում, պարզել, թե նրանք վճարող և ինչպես են սովոր-
ում, իսկ յեթե չեն սովորում, ապա ինչու:

Պետք է անմիջապես հատուկ աշխատանք կազ-
մակերպել ստախանովականների մեջ՝ անհատական ու
խմբական ուսուցման ձևով:

Սոսափելով աղմկարարութիւննից, ավելորդ խո-
սակցութիւններից՝ պետք է արձագանքել յուրաքան-
չյուր գործնական նախաձեռնութեան: Ահա որինակ,
մի քանի տարի սրանից առաջ մի ակտիվ գեղջիկուհի,
Տամբովի նահանգում սեփական նախաձեռնութեամբ
ռկսեց ընթերցանութիւն կազմակերպել: Նա ման եր

գալիս խրճիթից-խրճիթ և այն ժամանակ, յերբ կանայք աշխատում էյին, (գյուղը զբաղվում էր տնայնագործությամբ—ձեռագործով), բարձրաձայն ընթերցում եր նրանց համար: Կանայք ընթերցանությունը լսում էյին հսկայական հետաքրքրությամբ: Բոլորն սկսեցին իրենց մոտ կանչել Մաշային: Այն ժամանակ Մաշան առաջարկեց, թե՝ «յեկեք հավաքվենք տասական հոգով, մոտիկ ապրող հարեմաններով»: Այդպես ել արին: Հետո Մաշան սկսեց հոգ տանել այն մասին, Վոր իր խմբակի անդամները ներգրավվեն քաղաքական կյանքի մեջ: Յերբ զեկուցող եր գալիս շրջագործկոմից, նա վազում եր իր խմբակի մեջ մտնող գեղջկուհիների տները բոլորին համոզում եր գնալ ժողովի և այնուհետև զրուց, թե ինչպիսի ուրախություն եր զգում ինքը, յերբ տեսնում եր, Վոր իր ընթերցանություններին մասնակցողները բոլորն առանց բացառության յեկել են ժողովի:

Միթե այդպիսի ակտիվիստներ, այդպիսի հարուստ նախաձեռնությամբ, քիչ կան այժմ մեր գյուղում: Դրանց թիվը ավելի յե, քան առաջ: Անգրագիտության և կիսագրագիտության վերացման օեկցիաներում, Վորոնց մեջ կմտնեն նաև նրանք, ովքեր անձնապես չհասգրգաված են այդ գործում, յուրաքանչյուր գործնական նախաձեռնություն արձագանք կգտնի, կդառնա ընդհանուր սեփականություն:

Հենց անգրագիտության և կիսագրագիտության գործումն ե, Վոր կենցաղային պայմանները հաճախ կանգնում են ճանապարհին, խոչընդոտ հանդիսանում: Մսուրների, մանկապարտեղների բացակայությունը,

դրանց կազմակերպումը Վոչ այն կետում, ուր հարկավոր ե, Վոչ այն ժամերին, յերբ դրանք անհրաժեշտ են, առանձնապես զգալ են տալիս իրենց: Այստեղ խորհուրդների սեկցիաները չափազանց շատ բան կարող են անել:

Յեվ այդպես, անհրաժեշտ ե առաջին հերթին գյուղացիում ու քաղաքային խորհուրդներին յեվ քրզգործկոմներին կից կազմակերպել անգրագիտության ու կիսագրագիտության վերացման սեկցիաներ, հոգատար կերպով տկսիլ ընտել գյուղի լավագույն կուլսուրական ուժերից: Սեկցիաների մեջ պետք ե մտնեն ավելի մեծ թվով կեն ակտիվիստներ, ավելի յերթասառդուլթյուն. կոլտնտեսային ակտիվ, պրոֆմիուլթենական ակտիվ: Այնուհետև պետք ե անհապաղ կազմակերպել սեկցիաների յեջ նրանց տկսիլի ամենուրյա տեխատեմք: Սեկցիաները պետք ե ամմիշապես նշեն մոտակա ժամանակվա տեխատեմքի կոնկրետ պլանը, ճշգրիտ կերպով մատնանշելով, թե ով ի՞նչ գործի յե ձեռնարկում, և Վոր աշխատանքի համար ե պատասխանատու: Պետք ե ամենուրյա հասարակական վերահսկողություն սահմանել աշխատանքի նկատմամբ, ըստ Վորում վերահսկողությունը պետք ե լինի գործնական:

Այդ ժամանակ տեսուչների աշխատանքը ևս այլ կլինի: Յերբ տեսուչը գյուղ մեկնի, նա չպետք ե այնտեղ ինչ Վոր պեղուցներ կատարի, Ամերիկա գտնի, չպետք ե լսի, թե ով ինչ ե փափսում: Նա պետք ե նախ և առաջ հրավերի սեկցիաների նիստ՝ նրա ակտիվ մասնակցությամբ, զրուցի նրանց հետ, իմանա թե ինչ զժվարություններ ունեն նրանք, խորհուրդ տա, թե ինչ ե հարկավոր անել, հարց ու փորձ անի, թե ինչ ոգնության կարիք են զգում նրանք, Վորից հետո գնա

իր փորձված աչքով տեսնելու, թե ինչպես և տարվում
գործը: Հաճախ նա կողմնակի կերպով կարող և նկատել
այն, ինչ չեն նկատում տեղի աշխատողները: Մեկնե-
լուց առաջ տեսուչը մեկ անգամ ևս պետք և զրույց
ունենա սեկցիայի անդամներին հետ: Այդ, ահա, իսկա-
կան գործ կլինի:

Անգրագիտության և կրթագրագիտության վերաց-
ման գործում մեզ մոտ հաճախ չափից դուրս օտոս բյու-
րոկրատիզմ և լինում: Դիչ ուշադրություն և դարձվում
կենդանի մարդկանց, կենդանի գործին: Վերջին տա-
րիներս բյուրոկրատիզմը թափանցել և նաև «կորչի ան-
գրագիտություն» ընկերության մեջ: Այնքան հոգ չեն
տարել գրագիտությունը լավ սովորեցնելու մոտին,
վորքան ղրաղվել են փող հավաքելով, անդամներ
հավաքագրելով:

Մի բան ևս: Գործը հասկանալու ընդհանուրի
ուշադրությունը նրա վրա կենտրոնացնելու, այն կա-
նոնավորելու համար, պետք և գործը կատարել սոցիա-
լիստական մրցության պայմաններում, վորն անհրա-
ժեշտ մասսայականություն և տալիս գործին, արժեքա-
վոր նախաձեռնություն, գրական փորձ, նվաճումները
գործնում և ընդհանուրի օգտակարություն: Լավագույն
գյուղական գրադարանի՝ վերջերս անցկացված սոցիա-
լիստական մրցությունն առանձին ակնառությամ
ցույց տվեց սոցմրցման կարևորությունը վոչ միայն
արտադրական բնագավառում այլևս կուլտուրայի ճա-
կատում:

Ժամանակ չկորցնենք և ըստ հնարավորին ակտիվ
կերպով ու լավ սկսենք կենսագործել Համ. Կ(բ)ի
կենսակոմի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի վորոշումը:

ՈԳՆԵՆԵՔ ԿՈՄՅԵՆԻՏՄԵՆԻԹՅԱՆԸ, ՎՈՐ ՍՈՎՈՐԵՅՆԻ ԱՆԳՐԱԳԵՏՆԵՐԻՆ

(Ն. Կ. ԿՐՈՒՊՍԿԱՅԵՍԻ պիոներներին ու դպրոցական-
ներին ուղղած նամակից)

ԹԱՆԳԱԳԻՆ ՅԵՐԵՆԱՆԵՐ

Յերբ անցյալ ամառ մեզ մոտ սկսեց ծավալվել
գյուղական լավ գրադարանի մրցումը, յես ձեզ նամակ
գրեցի այն մասին, վոր մենք պետք և մասնակցենք
այդ գործին, ոգնենք գյուղի գրադարաններին, նրանց
համար ծնողներից ու ծանոթներից գրքեր հավաքենք,
ինքներդ խնամքով վերաբերվեք դեպի գրադարանի
գրքերը, գրադարանի համար նոր ընթերցողներ գտնեք,
գրքերն ընթերցողների տները տանենք, վատ կարդա-
ցողների համար լավ գրքերի բարձրաձայն ընթերցա-
նություն կազմակերպեք:

Յերեխաներն ինձ շատ նամակներ ուղարկեցին
այն մասին, վոր իրենք ոգնում են գրադարաններին:
Այդ նամակներն ստանալով, յես շատ ուրախացա, բայց
ավելի շատ ուրախացա, յերբ գյուղերից յեկած գրա-
դարանապետները, գյուղխորհուրդների նախագահները
և այլ աշխատողները, գրադարանների մասին զեկու-
ցելիս, պատմեցին, թե ինչպես յերեխաները գյուղերում
ոգնել են գրադարաններին: Կուրախանաք Լենինը
նրանց վրա նայելով: Այդ գործը ձեռքից բաց չթող-
նեք, յերեխաներ:

Բայց յես մի գործ ել ունեմ, վորտեղ ձեք ոգնու-
թյունը պետք և:

1917 թվին, յերբ աշխատավորներն իշխանու-

Թյուսն իրենց ձեռքը վերցրին, յերկիրն անգրագետ եր ու մութ: Գիտակից բանվորները ցանկացան շուտով այս դրուժյունը փոխել, յերկիրը դարձնել կուլտուրական ու դրագետ: Բայց սրա համար միայն ցանկությունը քիչ եր, մեծ աշխատանք եր պետք: Խորհրդային իշխանության հաստատվելուց յերեք տարի անցավ, 1920 թվականն եր, բայց և այնպես 3 մարդուց յերկուսն անգրագետ եր: Գյուղում անգրագետներն ալելի շատ եյին, քան քաղաքում:

Յեվ ահա 1920 թվին Լենինը, յեռլթ ունենալով կոմյերիտմիության յերթորդ համագումարում. խոսում ե այն մասին, թե հարկավոր ե վոր յերիտասարդությունը գործի անցնի, վոր բոլոր կոմյերիտականներն իրենց խամքի տակ վերցնեն անգրագետներին, հոգ տանեն, վոր նրանք սովորեն, ոգնեն նրանց այդ գործում: Յեվ կոմյերիտմիությունն այդ գործն իր վրա վերցրեց:

Այն գործը, վոր սկսվել ե 15 տարի առաջ Լենինի կոչով, դեռ չի աւարտված: Թեև այդ տարիների ընթացքում բազմամիլիոն անգրագետներ յեն սովորեցրել, սակայն դեռ անգրագետներ կան, մոտավորապես 5 մարդուց մեկն անգրագետ ե: Այժմ, կուսակցությունն ընկեր Ստալինի գլխավորությամբ պահանջում ե, վոր այս գործի վրա լուրջ ուղղորություն դարձվի և այնպես արվի, վոր բոլորն ել գրագետ դառնան: Մեր մեծ Խորհուրդների յերկրում չպետք ե հանդուրժել անցյալի միացորդները:

Պետք ե, վոր դուք ել, դպրոցականներդ ու պիոներներդ ել հարեք այս գործին: Թող ձեր կովարները, ձեր կոմյերիտականները պատմեն ձեզ թե ինչ աշխա-

տանք են կատարում անգրագետների հետ, պատմեն թե ինչպես են սովորեցրել իրենց ընկերներին, իրենց ավագ քույրերին ու մայրերին, թող կոմյերիտմիությունը պատմի ձեզ, իր փոխարինողին, իր փորձը, պատմի, թե այժմ ինչ ե մտածում անելու:

Այժմ դուք շատ բան կարող եք անել: Հոգացեք, վոր կիսագրագետները թերթեր և գրքույկներ ունենան, բարձրաձայն ընթերցեցեք նրանց համար: Հասակավոր անգրագետների համար այբբենաբաններ և տետրակներ ճարեցեք: Մաքուր, պարզ ձեռագրով նրանց համար պատվածքներ և վոտանավորներ արտագրեցեք: Հարցրեք ուսուցիչներին, թե ինչ պետք ե արտագրել Արտագրելով, դուք ինքներդ ել կսովորեք ալելի լավ, ուղիղ գրել: Թերթերի վրա մեծահասակ սովորողների համար գրեցեք բազմապատկության աղյուսակը և մետրական չափերը: Հասակավորների համար քարտեզներ, նկարեցեք, ուսուցիչների միջոցով ձեր աշխատանքն ստուգեցեք, ոգնեցեք հասակավորներին քարտեզներ նկարված թերթեր կարդալ: Պատմեցեք հասակավորներին ձեր ուսման մասին, պատմեցեք ձեր իմացածները, ոգնեցեք ինչով կարող եք:

Կազմակերպեցեք «Մեծահասակների ուսմանն ողնող» խմբակներ, հաճախ խորհրդակցեցեք ուսուցիչների հետ ձեր աշխատանքի մասին:

Հատուկ խնամք ունեցեք դեպի այլ անգրությունների յերեխաներն ու հասակավորները: Ամառը ձաբարներում դուք կարող եք մեծ աշխատանք կատարել:

Գրեցեք, թե ինչ եք անում, ինչ եք ցանկանում անել: Պատմեցեք ձեր փորձի մասին: Դուք Լենինի,

Ստալինի գաղափարներն ենք, դուք կոմյերիտմիության փոխարինողն ենք: Ինքներդ սովորելով, ոգնեցեք, վեր ուրիշներն ել սովորեն:

Լենինի—Ստալինի գործի համար պայքարելու պատրաստ յեղեք:

ԲՈՒՈՐ ՔԱՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻՆ ՇՐՋԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻՆ ՅԵՎ ԼՈՒՍԲԱԺՎԱՐՆԵՐԻՆ

Համկոմկուսի (բ) Կենտկոմը և ԽՍՀՄ-ի Ժողկոմ-խորհը ս/թ հունվարի 16-ին հատուկ վերոշում ընդունեցին մեծահասակ աղգարնակչության անդրադիտության և կիսադրադիտության վերացման մասին, վորի համաձայն 1936 թվի ընթացքում մեծահասակ աղգարնակչության միջից խալա վերացվելու յե անդրադիտությունը:

Հ. Ս. Խ. Հ. Կենտգործկոմը քաղաքական խոշոր նշանակություն տալով Համկոմկուսի Կենտկոմի և ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհի վերը հիշված վորոշման, իր ս/թ մարտի 14-ի նիստում վորոշել է՝ բոլոր քաղխորհուրդներին, շրջգործկոմներին, ավանային և գյուղական խորհուրդներին առնթևը կազմակերպել մեծահասակ աղգարնակչության անդրադիտության և կիսադրադիտության վերացման օեկցիաներ:

Մարտի 14-ի վերոշումը ճշտությամբ կենսագործելու նպատակով Հ. Ս. Խ. Հ. Կ. Գ. Կ. Կազմբաժինը և Լ. Ժ. Կ. գտնում են անհրաժեշտ, առաջադրել ձեզ ձեռք առնել հետևյալ միջոցառումները:

1. Սույն հրահանգն ստանալուց հետո 10 օրվա ընթացքում, քաղաքային, ավանային և գյուղական

խորհուրդներին, ինչպես նաև շրջանային գործադիր կոմիտեներին կից կազմակերպել «Մեծահասակ ազգաբնակչության անդրադիտության և կիսազբաղիտության վերացման սեկցիաներ»:

2. Խորհուրդներին ընդհանուր կանոնադրության համաձայն այդ նոր կազմակերպվող սեկցիայի կազմը պետք է բաղկացած լինի վոչ պակաս խորհրդի 3 անդամից, բացի այդ սեկցիայի մեջ պետք է ներգրավել նաև ավյալ խորհրդի տներխորհրայում գտնվող կուլտուրական առժեքի ակտիվը:

3. Սեկցիաները պետք է ունենան իրենց աշխատանքի ծրագիրը, վորի սխեման պարտավոր է նրանց տալ Լուսժողովատը, իսկ տեղերում լուսբաժինները պարտավոր են պարբերաբար ստուգման յնթադիել սեկցիաների աշխատանքի ծրագրի կատարումը:

4. Սեկցիաների աշխատանքների հիմնական նպատակն է լինելու իր խորհրդի սահմաններում գտնվող մեծահասակ ազգաբնակչության մեջ յեղած անդրադետներն ու կիսազբաղետների ճիշտ հաշվառումը և հատուկ միջոցառումներով 1936 թվի ընթացքում նրանց անդրադիտության լրիվ վերացնելը:

5. Խորհուրդներին նախադաները և լուսբաժնարները պարտավոր են տեղերից ստացված տվյալներին հիման վրա ապահովել անդրադետներն և կիսազբաղետների դպրոցներն անհրաժեշտ քանակի դասատուներով, դասադրերով, ուսումնական պիտուկներով և տեխնիկական անհրաժեշտ հարմարություններով (շենք, վառելիք, լուսավորություն, սեզան, նստարան և այլն):

6. Քաղաքական խոշոր նշանակություն տալով 1936 թ. ընթացքում մեծահասակ ազգաբնակչության միջից անդրադիտության վերացման գործին, առաջա-

դրվում է ձեզ այս կապակցությամբ կազմակերպված սեկցիաների միջև ծավալել սոցիալիստական մրցակցություններ՝ կնքելով փոխադարձ սոցալալանադրեր:

Մինչև ապրիլի 14-ը ներկայացնել Լ. Ժ. Կ. և Կ. Գ. Կ. ձեր շրջանում կազմակերպված սեկցիաների քանակի մասին համապատասխան տեղեկագիր ցույց տալով նրանց մեջ ընդգրկված խորհրդի անդամների և կուլտակտիվի ճիշտ թիվը:

Այնուհետև շրջանային լուսբաժնարները պարտավոր են այդ սեկցիաների գործունեյության մասին ամիսը մեկ անգամ ներկայացնել Լուսժողովոմատին ամփոփ ինֆորմացիա:

Հ. Ս. Խ. Հ. Կենտգործկոմի կազմբաժնար

(Լ. Վարդապետյան)

Հ. Ս. Խ. Հ. Լուսժողովոմի տեղակալ (Գ. Աբով)

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՐԻՆՏՏԻՐ ՊԼԱՆ

Քաղաքային, քաղաքային յեվ գյուղական խորհուրդներին կից կազմակերպվելիք անգրագիտւթյան յեվ կիսագրագիտւթյան վերացման սեկցիաների

Նպատակ ունենալով վորոշ ոժանդակություն ցույց տալու խորհուրդներին կից նոր կազմակերպվելիք անդրադիտության և կիսազբաղիտության վերացման սեկցիաներին սույն որինտիր պլանի մեջ տրվում

են այն խնդիրները, վերոնք մեծահասակ աղգարնակ-
չության անգրագիտության և կիսագրագիտության աշ-
խատանքների ընթացքում հիմնականում դրվելու յեն
սեկցիաների առաջ:

Սեկցիաները հիմք ունենալով տվյալ պլանը և
յեկնելով տեղի ուրույն պայմաններից կազմելու յեն
թրենց տարեկան, յեռամսյա և որացուցային պլանները:

1) Սեկցիայի անդամի (նշել աղբը և անուռը)
նախագահությամբ կազմված առանձին հանձնաժողովի
միջոցով կատարել մանրամասն հաշվառում, վորի ըն-
թացքում անհատական ստուգման միջոցով պարզել
տվյալ վայրում յեղած 14—50 տարեկան անգրագետ-
ների ու կիսագրագետների թիվը և ունենալ նրանց
անվանական ցուցակը սեկցիայի գործերում (այս աշ-
խատանքին մասնակից դարձնել տեղի ուսուցչությանը):

2) Հաշվառումը կատարել այնպես, վոր կարելի
լինի պարզել թե տվյալ վայրի անգրագետներից ու
կիսագրագետներից քանիսն են կուս. անդամ, ԼԿՑԵՄ
անդամ, պրոֆ. անդամ, արական, իգական, ըստ աղ-
գության:

3) 14—18 տարեկան, ինչպես նաև մինչ զինակո-
չիկ անգրագետների ու կիսագրագետների վերաբերյալ
ունենա առանձին հաշվառում և առանձին ցուցակ:

4) Ձեռքի տակ յեղած տվյալների հիման վրա
անգրագիտության և կիսագրագիտության վերացման,
ինչպես նաև գեռահասների (14—18 տարեկան) զըպ-
րոցների վարիչների ու դասատուների միջոցով կա-
տարել կոմպլեկտավորում և պարզել թե տվյալ վայրում
ամեն մի դպրոց (անգրագետների, կիսագրագետների,

բարձր տիպի, դեռահասների) քանի դասարան են ու-
նենալու:

5. Հաշվառման յենթարկել մեծահասակ անգրա-
գետների ու կիսագրագետների դպրոցների համար
պահանջվելիք դասասենյակների թիվը այս նպատակի
համար ոգտագործել մասսայական դպրոցների շենքերը
կոլխոզակուսները, կարմիր անկյունները, հիմնարկնե-
րի գրասենյակներն աշխատանքից հետո և այլն:

6. Ապահովել գործող դպրոցները վառելիքով,
լուսավորությամբ և անհրաժեշտ ինվենտարով:

7. Ուսումնական տարվա սկզբում տանել անհրա-
ժեշտ նախապատրաստական աշխատանք (շենքերի վե-
րանորոգում, ինվենտարի պատրաստություն և այլն):
Հրավիրել հիմնարկների ու կազմակերպությունների
պատասխանատու աշխատակիցների խորհրդակցություն
և քննության առնել անգրագիտության և կիսագրա-
գիտության վերացման աշխատանքները, պարզել յու-
րաքանչյուր հիմնարկության և կազմակերպության
պարտականությունները (նյութական և կազմակերպ-
չական) և տալ յուրաքանչյուրին կոնկրետ առաջա-
դրանքներ:

Հետագայում սեկցիայի անդամների միջոցով պար-
բերաբար ստուգման յենթարկել կազմակերպություն-
ներին տրված առաջադրությունների կատարումը:

8. Շրջանային ու լուսբաժինների և դպրոցների
վարիչների միջոցով ժամանակին և լրիվ չափով ապա-
հովել դպրոցները դասատուներով, դասագրքերով, տե-
տրերով և ուսումնական անհրաժեշտ պիտույքներով:

9. Սխառմատիկ կերպով ստուգման յենթարկել անգրագիտության ու կրթագրագիտության վերացման գործի ընթացքը, յերևան բերել նկատված թերությունները, ձեռք առնել անհրաժեշտ միջոցներ յեղած բացերը վերացնելու համար և առնվազն ամիսը մեկ անգամ սեկցնայի իսկ յերեք ամիսը մեկ խորհրդի նիստում լսել սեկցիայի նախագահի և դպրոցի վարիչի զեկուցումը

10. Ուժեղ հսկողություն սահմանել հաճախումների վրա և պայքարել մաղուկների դեմ: Հաճախումները կանոնավոր դարձնելու ուղղությամբ ձեռք առնել բոլոր հնարավոր միջոցները: Այս աշխատանքի մեջ ներգրավել կոմյերիտմիության և պիոներ կազմակերպություններին:

11. Հաճախումները կանոնավորելու և մաղուկների դեմ պայքարելու ընթացքում ձեռք առնված միջոցառումներին մասնակից դարձնել համապատասխան հիմնարկներին ու կազմակերպություններին, ունենալով նրանց հետ ընդհանրապես սերտ համագործակցություն:

12. Համապատասխան զեկուցումների, ագիտացիայի, պատի թերթերում լույս տեսնված նյութերի միջոցով անգրագիտության և կրթագր. վերացման շուրջը ստեղծել լայն հասարակայնություն: Այս և նման միջոցառումներով տվյալ վայրում ստեղծել սեկցիայի շուրջը այնպիսի ակտիվ, վեր կարելի լինի նրանց միջոցով աստիճանաբար ուժեղ թափ հաղորդել անգրագիտության վերացման աշխատանքներին:

13. Փոքրահասակ յերեխաներով ծանրաբեռնված անդրագետ ու կրթագրագետ կանանց լրիվ չափով դըպ-

րոցներն ընդգրկելու նպատակով գործող դպրոցներին կից կազմակերպել բաց մսուրներ ներգրավելով այս աշխատանքի մեջ կոմսոմոլին և պիոներական կազմակերպությունը:

14. Ռեցիդիվի դեմն առնելու և մեծահասակ անգրագետներին ու կրթագրագետներին կրթական մակարդակը բարձրացնելու նպատակով դպրոցներում սովորող անգրագետ ու կրթագրագետ մեծահասակներին կապել ակումբային և գրադարանային աշխատանքներին, միաժամանակ կազմակերպել նրանց համար ինքնագրագրության խմբակներ:

- 1) Առաջաբան 3
- 2) Ինչից սկսել 5
- 3) Ոգնենք կոմյերիտմիությանը, վոր սովորեցնի
անգրագետներին 11
- 4) Բոլոր քաղխորհուրդներին շրջխորհուրդներին
և լուսբաժվարներին 15
- 5) Որինեաիբ պլան սեկցիաների աշխատանքների 17



383

ՀՀ Ազգային գրադարան



NL0222509

52. 197